ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«10» ապրիլի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 24 (քսանչորս) անդամներ՝
Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Ա.Ադամյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Հունանյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Եդիգարյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ա.Խաչատրյանը, Ռ.Սարգսյանը, Ա.Աղանյանը, Ս.Մարտիրոսյան, Լ.Բարսեղյանը, Ա.Վարդանյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ԼՍԵՑԻՆ.
1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.
Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 234-Ն որոշման(այսուհետ՝ որոշում) 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար NN 1,2,3 հավելվածների:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

Համայնքի ավագանու անդամ Սաշա Մարտիրոսյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 2-րդ հարցից:

3. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 104 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՉՈՐՍ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 104 (մեկ հարյուր չորս) անձանց կանխիկ հատկացնել 1 040 000 (մեկ միլիոն քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՎ ԵՐԵՔ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԹՎՈՎ 499 (ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԻՆԸ) ՍՈՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԽԻՍՏ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի սոցիալական աջակցության բաժիններում անապահովության գնահատման համակարգում հաշվառված և երեք անչափահաս երեխա ունեցող սոսոցիալապես խիստ անապահով 499 (չորս հարյուր իննսունինը) ընտանիքներից յուրաքանչյուրին որպես դրամական օնություն հատկացնել 10 000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 4990000 (չորս միլիոն ինը հարյուր իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

Համայնքի ավագանու անդամ Արամ Խաչատրյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 4-րդ հարցից:

ԼՍԵՑԻՆ.

5. ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես անապահով պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված՝ թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 173 (մեկ հարյուր յոթանասուներեք) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3 460 000 (երեք միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N2 հավելվածի,

3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 15 (տասնհինգ) ազատամարտիկներից յուրաքանչյուրին 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 225 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ՝ թվով 233 (երկու հարյուր երեսուներեք) ազատամարտիկներից՝ յուրաքանչյուրին 10.000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 330 000 (երկու միլիոն երեք հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 12 (տասներկու) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 180 000 (մեկ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի:

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 5 (հինգ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 75. 000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՒՅՐԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու կույրերի սկզբնական կազմակերպությանը որպես դրամական օնություն հատկացնել 620 000 (վեց հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ կազմակերպությունում հաշվառված սոսոցիալապես խիստ անապահով թվով 62 (վաթսուներկու) կույր հաշմանդամներից յուրաքանչյուրին 10 000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տրամադրելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ԳԻՐՔ Գ» ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» համայքային ոչ առևտրային կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 1 379 000 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հովհաննես Շիրազի «Անտիպ էջեր գիրք Գ» գրքի տպագրման ծախսերը հոգալու նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ԲԱԼԱԲԵԿՅԱՆ)

Հարցի քննարկման ընթացքում «ԳԱԼԱ» խմբակցության կողմից եղավ առաջարկություն՝ առկա խնդիրների վերաբերյալ ընդունել ուղերձ կառավարությանը:

Ավագանու անդամներից մի քանիսի կողմից էլ առաջարկություն եղավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել որոշակի հաստիքներ՝ համայնքապետարանի աշխատանքները հետագայում ավելի անթերի կազմակերպելու համար:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության՝ նիստի ընթացքում հարցի քննարկման ժամանակ կատարված բանավոր առաջարկությունները ներառելով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ա.Առաքելյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մարտի 30-ի N 46-Ա որոշմամբ հաստատված «Գյումրու համայքապետարանի կողմից համայնքային բյուջեի միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և համայնքային սեփականության օգտագործման վերաբերյալ» ընթացիկ եզրակացությունը (այսուհետ՝ եզրակացություն)՝ համաձայն հավելվածի:

2. Եզրակացության քննարկման արդյունքում հանձնարարել.

1) Գյումրի համայնքի ղեկավարին՝

ա. համայնքի բյուջեի միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և համայնքային սեփականության օգտագործմանն առնչվող աշխատանքները կազմակերպել՝ հետագայում բացառելով եզրակացության մեջ նշված թերություններն ու անհամապատասխանությունները,

բ. ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կամ թերի կատարելու համար Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային համապատասխան ստորաբաժանումների (այսուհետ՝ բաժիններ), համայնքային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կառույցներ) ղեկավարներին ենթարկել կարգապահական պատասխանատվության,

գ. Գյումրի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) հաստատմանը ներկայացնել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում լրացում կատարելու մասին ավագանու որոշման նախագիծ, որով կստեղծվի իրավաբանական բաժնի պետի տեղակալի թվով 2 (երկու) հաստիք և համայնքի ղեկավարի տեղակալի օգնականի հաստիք:

2) բաժինների պետերին և կառույցների ղեկավարներին՝ իրենց իրավասության սահմաններում ձեռնարկել համապատասխան քայլեր եզրակացության մեջ ներառված թերությունները և անհամապատասխանությունները հնարավորինս արագ շտկելու և հետագայում բացառելու ուղղությամբ,

3) ավագանու «ԳԱԼԱ» խմբակցության անդամ Արման Գրիգորյանին՝ ավագանու հաստատմանը ներկայացնել ուղերձի նախագիծ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Որոշումն ընդունվեց

Համայնքի ավագանու անդամ Արման Գրիգորյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 8-րդ հարցից:

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ 18 ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԽՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Գյումրի քաղաքի 18 երկրորդային փողոցների հիմնանորոգում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ
   1) ծրագրի արժեքը կազմում է 921 389 100 (ինը հարյուր քսանմեկ միլիոն երեք հարյուր ութսունինը հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 414 625 095 (չորս հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայքը՝ Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեյի 4/5/1 գործառական դասակարգման (5113)« Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում» տնտեսական դասակարգման հոդվածից,
   2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջարդ օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՇԱՏՐՎԱՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ՈՒ ՊՈՒՐԱԿՆԵՐՈՒՄ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԻ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՈՒ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶՈՒԳԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԽՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 3 (Ա.Վարդանյան, Ա.Գրիգորյան, Ա.Առաքելյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի շատրվանների արդիականացում, այգիներում ու պուրակներում նստարանների,

աղբամանների պատրաստում ու տեղադրում և հասարակական զուգարանների կառուցում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) ծրագրի արժեքը կազմում է 184 541 700 (մեկ հարյուր ութսունչորս միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 110 725 020 (մեկ հարյուր տասը միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար քսան) Հայաստանի Հանրապետության դրամ համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայքը՝ Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեյի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում»,6/6/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ», 5/1/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենա սարքավորումներ» տնտեսական դասակարգման հոդվածներց,

2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջարդ օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂԱՎԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐՆ ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԽՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Գյումրու բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել որ՝

1) ծրագրի արժեքը կազմում է 338 020 000 (երեք հարյուր երեսունութ միլիոն քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 33 802 000 (երեսուներեք միլիոն ութ հարյուր երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայքը՝ Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեյի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսական դասակարգման հոդվածից,

2) Ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջարդ օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂԱՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԵԼԱՑԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀԻՄՆՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԽՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Գյումրի քաղաքում խելացի հանրային զբոսայգու հիմնում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ՝
   1) ծրագրի արժեքը կազմում է 100 000 000 (մեկ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 15 000 000 (տասնհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայքը՝ Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեյի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսական դասակարգման հոդվածից,
   2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջարդ օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԵԼԱՑԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀԻՄՆՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԽՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Գյումրի քաղաքում խելացի հանրային զբոսայգու հիմնում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ՝
   3) ծրագրի արժեքը կազմում է 100 000 000 (մեկ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 15 000 000 (տասնհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայքը՝ Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեյի 6/6/1 գործառական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսական դասակարգման հոդվածից,
   4) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջարդ օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԹՎՈՎ ՉՈՐՍ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 2 (Լ.Բարսեղյան, Ա.Վարդանյան)
ձեռնպահ – 3 (Ա.Գրիգորյան, Ա.Խաչատրյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Սահմանել արտոնություն Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմին սեփականության իրավունքով պատկանող թվով չորս՝ VAZ 21065 մակնիշի 412 SO 45 պետհամարանիշի, GAZ 311000 մակնիշի 009 LO 70 պետհամարանիշի, GAZ 2705 մակնիշի 219 SO 45 պետհամարանիշի, OPEL SINTRA 2.2 մակնիշի 436 SO 45 պետհամարանիշի տրանսպորտային միջոցների 2020 թվականի գույքահարկի գումարի վճարման նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 58800 (հիսունութ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մուշ-2 թաղամաս 1-ին փողոց N 12 հասցեի 0.58 (զրո ամբողջ հիսունութ) հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամասը նվիրաբերել «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամին՝ բազմաբնակարան շենք և մանկապարտեզ կառուցելու նպատակով:
2. Հողամասի նվիրաբերության պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2020 թվականի մայիսի 12-ը ժամը 12^{00}-ն:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Կ. Միքայելյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ս.Մարտիրոսյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա.Վարդանյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա.Խաչատրյան _____

Գ. Մաթևոսյան _____

Հ.Պողոսյան _____

Ա.Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

քաղաք Գյումրի
«10» ապրիլի 2020 թվական